Այս նույն դեպքը հաստատվում է նաև մի շարք այլ պատմագիրների վկայությամբ[1] և Սանահնի վանքի № 105 արձանագրությամբ։

Դիոսկորոսը հայոց կաթողիկոս է դարձել 1037 թվականին[2]։ Ի՞նչպես կարող էր 1048 թվականից հետո հիմնադրված վանքը 1037-ին և ավելի առաջ վանահայր ունենալ։ Նշանակում է, Գանձակեցու այդ սխալ վկայությունը հերքվում է հենց իր՝ Գանձակեցու մի այլ տեղեկությունով։

7. Կիրակոս Գանձակեցին այդ նույն հատվածի մեջ Դավիթ Անհողինի որդի Կյուրի-



Ներքին (Ամերափրկչի) և Մեծ (Աստուածածնի) դավիթների սյուներն ու մուտքի բացվածքն իրենց հատակաձևերով։

կեին է վերագրում նաև Հաղբատի վանքի հիմնադրումը։ Այնպես որ, եթե հավատալու լինենք նրան, պետք է Հաղբատի վանքի բարձրաքանդակները ևս վերագրենք նույն Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեին և նրա հորեղբայր Սմբատին։ Ակադեմիկոս Բրոսսեն, հ. Ղ. վ. Մովսեսյանը և պրոֆ. Մելիքսեթ-բեկը այդ հարցում հետևողական չեն, քանի որ Գանձակեցու տեղեկությունը Սանահնի վերաբերյալ ընդունել են, իսկ Հաղբատի մասին՝ ոչ։ Այդպես են վարվել ակներև սխալից խուսափելու համար։

8. Գանձակեցին այդ սխալ տեղեկությունը հաղորդում է մի միջանկյալ նախադասության մեջ, երբ խոսում է բոլորովին այլ նյութի, Գրիգորիս կաթողիկոսի Հռոմ գնալու և նրա փոխարեն Աղվանից Հովսեփ կաթողիկոսի միջոցով տեր Բարսեղին հայոց կաթողիկոս ձեռնադրելու մասին։ Նշանակում է այդ նախադասությունը պատահական երևույթ ունի։

Այսպիսով պարզ է դառնում, որ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, ինչպես վերևում նշեցինք, թյուրիմացության արդյունք է և որևէ կերպով չի պատճառաբանվում։ Այդ տեղեկությունը, ինչպես ցույց տվինք 6-րդ կետում, հերքվում է հենց Գանձակեցու վկայությամբ։ Հետևապես, Գանձակեցու այդ վկայության վրա հիմնվելով, չի կարելի Սանահնի վանքի հիմնադրումը և Ամենափրկիչ եկեղեցու արևելյան պատի բարձրաքանդակները վերագրել 11-րդ դարին։

Նշանակում է, Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան ճակատի բարձրաքանդակ պատկերները պատկանում են Լոռիի

[1] Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 107, Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 76, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, էջ 98 և այլն։

[2] Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հատ. ա, էջ 1213։ Նաև Աճառյան, Անձնանունների բառարան։